

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Էկոնոմիկայի Նախարարության գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչության (ԳՕԻՎ) կողմից իրականացվող ՀԳՌԿՄ II Ծրագրի Արժեշրթանների Ձարգացման Բաղադրիչի մրցույթ

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչության (ԳՕԻՎ) կողմից իրականացվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագիրը, որի բաղադրիչներից է «Արժեշրթանների զարգացումը» (ԱՇԶ): Արժեշրթանների զարգացմանն ուղղված ենթածրագրերը իրականացվում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Ենթածրագրերի ընտրությունը կատարվում է մրցութային կարգով՝ համաձայն գործող ընթացակարգի:

ԱՇԶ Բաղադրիչի գերակա նպատակը.

կաթի, մսի (ձուկ, թռչուն), մրգի, բանջարեղենի, մեղրի և բարձրարժեք հատապտղի, թեյերի (այդ թվում՝ բուսական) վերամշակման, ինչպես նաև կերարտադրության և սառնարանային տնտեսությունների ոլորտներում շուկայահանվող (իրացվող) արտադրանքի ծավալային աճն է:

ԱՇԶ Բաղադրիչի նպատակները.

- Բացահայտել ընտրված արժեշրթանների զարգացման խոչընդոտները:
- Բարելավել գյուղատնտեսական առաջնային արտադրողների և սննդի վերամշակողների կողմից ներքին շուկայի պահանջարկը բավարարելու և միջազգային շուկայում ընձեռված հնարավորություններն օգտագործելու ունակությունները:

ԱՇԶ Բաղադրիչը նպատակային ֆինանսական օժանդակությունը տրամադրում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան և պատշաճ ձևով գրանցված ու գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարող բոլոր սուբյեկտներին՝ անհատ ձեռներեցներին, արտադրական և սպառողական կոոպերատիվներին, գյուղատնտեսական և սննդի վերամշակման ձեռնարկություններին, որոնք այս կամ այն կերպ ներգրավված են նշված արժեշրթանների գործողության մեջ:

Իրավասու հայտատուներ.

ԱՇԶ Բաղադրիչի շրջանակներում իրականացվող մրցույթին կարող են մասնակցել.

- Հայաստանում գյուղատնտեսության և սննդի վերամշակման ոլորտներում գործող իրավական պատշաճ գրանցում ունեցող բոլոր տիպերի կազմակերպություններն ու անհատ ձեռներեցները, այդ թվում՝ տարբեր տիպի կոոպերատիվներ, ՍՊԸ-ներ, ասոցիացիաներ և միություններ և այլ կազմակերպություններ՝ բացառությամբ հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների:

Իրավասու հայտատուներից (վերամշակող ձեռնարկություններ և այլն) առաջնահերթություն կստանան այն հայտատուները, որոնք ենթածրագրերի իրականացման ընթացքում լայնածավալ համագործակցություն (պայմանագրային հիմունքներով) կնախատեսեն մեծ քանակությամբ ֆերմերային տնտեսությունների հետ:

Նպատակային ֆինանսավորման ուղղությունները.

ԱՇԶ Բաղադրիչի շրջանակներում Շահառուներին հատկացվող նպատակային ֆինանսավորման գումարները կարող են օգտագործվել ստորև նշված ծախսերի լրիվ կամ մասնակի ֆինանսավորման նպատակով.

1. Նոր սարքավորումների (վերամշակման սարքավորումների, ինչպես նաև տրակտորների) ձեռքբերում, այդ թվում՝ արտադրության և վերամշակման սարքավորումներ, հետերբրահավաքային մշակման և վերամշակման, պահեստավորման և պահպանման, լաբորատոր (ներառյալ՝ շարժական և հատուկ մասնագիտացած տեխնիկա և սարքավորումներ), փաթեթավորման և տեսակավորման, որակի

- վերահսկողության, բոլոր տիպերի սարքավորումների և տեխնիկական հոսքագծերի՝ կապված արտադրանքի որակի բարելավման և ծավալների ավելացման հետ,
2. Առկա (հին) սարքավորումների տեխնոլոգիական վերազինման սարքավորումներ,
 3. «ՄԱԿՀ» Սննդի անվտանգության կառավարման համակարգի իրականացում՝ ներառյալ իրականացման ընթացակարգերի բոլոր փուլերը (ուսուցումներ, հետևյալ համակարգերի ներդրում՝ HACCP, ISO, Global Gap GAP, օրգանական արտադրություն, պատշաճ գործելակերպի բոլոր տեսակները, հարակից այլ տեխնիկական աջակցություն և այլն),
 4. Տեղական և միջազգային հավաստագրերի ձեռքբերում և միջազգային կազմակերպությունների կողմից հավաստագրում,
 5. Շուկայավարման և բրենդինգի ծառայությունների ձեռքբերում (ներառյալ՝ առևտրային նշանի և արտադրանքի արտաքին տեսքի (նաև փաթեթավորման) մշակումը և այլն),
 6. Բոլոր տեսակի բարձրարժեք մրգերի և հատապտուղների նոր սորտերի տնկիների ձեռքբերում,
 7. Տեխնիկական աջակցության և մասնագիտական տեխնիկական և շուկայավարման (հատկապես արտահանման խթանման վերաբերյալ) խորհրդատվության ձեռքբերում,
 8. Շարժական սառեցման սարքեր, սառեցնող պահեստների, սառնարանային բեռնարկղերի և բեռնափոխադրման սառեցնող հարմարանքներ:

Վերոնշյալ ակտիվների ձեռքբերումը կարելի է ֆինանսավորել ինչպես ԱՇԶ Բաղադրիչի նպատակային ֆինանսավորման, այնպես էլ շահառուների համաֆինանսավորման հաշվին:

ԱՇԶ Բաղադրիչի շրջանակներում շահառուներին հատկացվող նպատակային ֆինանսավորումը չի կարող օգտագործվել հատկապես ստորև նշված ծախսերի ֆինանսավորման նպատակով.

- Նախքան Դրամաշնորհային համաձայնագրի կնքումը կատարված որևէ ձեռքբերում,
- Բնապահպանական առումով վտանգավոր և շրջակա միջավայրի վրա անվերականգնելի բացասական ազդեցություն ունեցող ակտիվների ձեռքբերումը,
- Բացասական սոցիալական ազդեցություն ունեցող կամ տարաբնակեցման ռիսկեր պարունակող ակտիվների ձեռքբերում,

Ինչպես նաև՝

1. Ծինությունների և հողատարածքների ժամանակավոր կամ մշտական ձեռքբերումը, վարձակալության ծախսերը,
2. Ցանկացած տիպի և ծավալի շինարարական աշխատանքների իրականացման ծախսերը: Եթե անհրաժեշտ է իրականացնել վերանորոգման որոշակի աշխատանքներ (որոնք, օրինակ, կարող են պահանջվել սննդի անվտանգության համակարգերի ներդրման ժամանակ), ապա դրանք պետք է ֆինանսավորվեն շահառուների կողմից կատարվող ենթածրագրի համաֆինանսավորման միջոցներով,
3. Հումքի և այլ շրջանառու միջոցների ձեռքբերումը,
4. Աշխատանքի վարձատրության և փոխհատուցման ծախսերը (ցանկացած տիպի),
5. Շահառուի գործառնական ծախսերը, որոնք հակասում են ԱՇԶ Բաղադրիչի դրույթներին,
6. Սարքավորումների վերանորոգման ծախսերը,
7. Աշխատավարձը և փոխհատուցման ծախսերը (ցանկացած տեսակի)՝ ներառյալ ՄԱ-ի խորհրդատուն:

Վերջին ցանկի կետերից (1-7) յուրաքանչյուրի մասով շահառուի սեփական ֆինանսական ռեսուրսներից կատարած ծախսերը համարվում են Շահառուների համաֆինանսավորում և հաշվում են նրա կողմից ենթածրագրի բյուջեում ներդրման ենթակա 50%-ի համալրում:

Ներկայացվող պահանջներ

Հայտատուի կողմից ներկայացվող Հայտ-Դիմումները և Բիզնես-Հայտերը պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

- Առաջարկվող ենթածրագրի տևողությունը պետք է լինի առավելագույնը՝ 12 (տասներկու) ամիս,
- Ենթածրագրերի նպատակային ֆինանսավորման գումարը պետք է լինի նվազագույնը 8,000 ԱՄՆ դոլար, իսկ առավելագույնը՝ 50,000 ԱՄՆ դոլար,
- ԱՇՁ Բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ենթածրագրերի համաֆինանսավորում՝ տվյալ ենթածրագրի իրականացման բյուջեի նվազագույնը 50%-ի չափով,
- Շահառուների կողմից ենթածրագրերը պետք է համաֆինանսավորվեն ֆինանսական միջոցներով: Համաֆինանսավորում է համարվում շահառուի կողմից իրականացվող բացառապես ֆինանսական ներդրումը: Ոչ ֆինանսական ակտիվների (հող, անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, աշխատանք և այլն) ներդրումը ԱՇՁ Բաղադրիչի կողմից չի համարվում համաֆինանսավորում:
- Հայտատուն չի կարող մեկ անգամից ավել ստանալ ենթածրագրերի նպատակային ֆինանսավորում:
- Ենթածրագրերի նպատակային ֆինանսավորում չի հատկացվում այն հայտատուներին, որոնք անհաջողության են մատնել կամ նախկինում ձախողել են ՀԳՌԿՄ 2-ի ներքո իրականացվող որևէ ենթածրագիր:

Լրացուցիչ պահանջներ.

1. Մենդի անվտանգության (ՄԱ) խորհրդատուի հետ համաձայնագիր կնքելու համար շահառուից չի պահանջվում հայտարարել մրցույթ: ՄԱ խորհրդատուն շահառուի կողմից կարող է ընտրվել ՀԲ-ի կողմից հաստատված և համաձայնեցված ցանկից:

Հայտ-Դիմումների ընդունում

Շահագրգիռ հավակնորդները (ղիմորդները) Հայտ-Դիմումները և պահանջվող փաստաթղթերը պետք է ներկայացնեն ՀՀ Էկոնոմիկայի Նախարարության գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչության (ԳԾԻՎ) ՀԳՌԿՄ II Ծրագրի ԱՇՁ քարտուղարություն՝ առձեռն կամ էլեկտրոնային փոստով **մինչև 2020թ. օգոստոսի 26-ը, ժամը 18:00-ն:**

Հայտ-Դիմումները պատրաստում և ներկայացնում են հավակնորդ մասնակիցներն՝ իրենց ղեկավարի ստորագրությամբ: Վերջնաժամկետից հետո ներկայացված Հայտ-Դիմումները ենթակա չեն ընդունման ԱՇՁ կողմից: Էլեկտրոնային փոստով ներկայացված հայտերը կհամարվեն ընդունված միայն պատասխան հաստատումը ստանալուց հետո:

Ծանուցում

Ինչպես ընտրված, այնպես էլ մերժված հայտատուները կտեղեկացվեն գրավոր: Մերժված հայտատուներին կվերադարձվեն իրենց կողմից ներկայացված փաստաթղթերի բնօրինակը:

ԱՇՁ Բաղադրիչի գործունեության և հայտերի պատրաստման կանոնակարգերին մանրամասն ծանոթացնելու նպատակով ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչության (ԳԾԻՎ) ՀԳՌԿՄ II Ծրագրի ԱՇՁ քարտուղարության աշխատակազմը պոտենցիալ հավակնորդների համար կկազմակերպի աշխատաժողով **2020 թվականի օգոստոսի 20-ին, ժամը 12:00-ին** (Հասցե՝ 0010, ՀՀ ք. Երևան, Մ. Մկրտչյան փող. 5, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն), իսկ այն մասնակիցները ովքեր չեն կարողանա մասնակցել այդ հանդիպմանը, նրանց համար կկազմակերպվի ZOOM (առցանց) աշխատաժողով **2020 թվականի օգոստոսի 21-ին, ժամը 12:00-ին:** ZOOM (առցանց) աշխատաժողովին մասնակցելու համար խնդրում ենք նախապես հաստատել Ձեր մասնակցությունը ստորև նշված էլեկտրոնային հասցեով՝ մինչև օգոստոսի 20-ը:

Հայաստանում նոր կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված՝ յուրաքանչյուր կազմակերպությունից աշխատաժողովին կարող է մասնակցել մեկ ներկայացուցիչ:

Փաստաղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ.

Հայտ-Դիմումների պաշտոնական ձևանմուշների լրացման հետ կապված այլ անհրաժեշտ տեղեկություններ կարող եք ստանալ ՀԳՌԿՄ II Ծրագրի ԱՇԶ քարտուղարությունից:

Էլեկտրոնային փոստ - vghukasyan@agridf.am; dbaziyan@agridf.am, diana_baziyan@yahoo.com

Հեռախոս - 091-01-35-15, 093-43-34-04, 093-00-28-24:

Հայտ-Դիմում

Համայնքների Գյուղատնտեսական Ռեսուրսների Կառավարման և Մրցունակության II Ծրագիր

Արժեշտի Չարգացման (ԱՇՉ) Բաղադրիչ

Իրավասու Հայտատուի Հայտ-Դիմում

1.	Ընդհանուր տեղեկություններ հայտատուի վերաբերյալ	
	Լրիվ անվանումը	
	Իրավական կարգավիճակը	
	Պետական ռեգիստրում գրանցման համարը	
	Հարկ Վճարողի Հաշվառման Համարը	
	Հիմնման տարեթիվը	
	Հիմնադիրների Ա.Ա.Հ և մասնաբաժինները (Կոոպերատիվների դեպքում առանձին կցել մասնակիցների ողջ ցանկը)	1. _____, _____ % 2. _____, _____ % 3. _____, _____ % 4. _____, _____ %
	Տնօրենի Ա.Ա.Հ.	
	Գլխավոր հաշվապահի Ա.Ա.Հ.	
	Իրավաբանական հասցեն	
	Գործունեության հասցեն(երը)	1. _____ 2. _____
	Կոնտակտային հեռախոս և էլ. փոստ	
	Բանկի անունը և հասցեն	
	Բանկային հաշիվը	

2.	Ֆինանսական տեղեկություններ	ՀՀ դրամ
	Վերջին հարկային տարվա իրացումները	
	Դեռ չհարկված շահույթը վերջին հարկային տարում	
	Վերջին հարկային տարվա իրացումները մրգի, բանջարեղենի և սննդամթերքի արտահանումից	
	Վերջին հարկային տարվա իրացումները Ռուսաստան արտահանված մրգից, բանջարեղենից և սննդամթերքից	

3.	Բիզնես պլանը ներդրումից հետո	ՀՀ դրամ
	Ակնկալվող իրացումները մրգի, բանջարեղենի և սննդամթերքի արտահանումից՝ առաջարկվող ներդրումից 3 տարի անց	

Ռուսաստան արտահանվող մրգի, բանջարեղենի և սննդամթերքի ակնկալվող իրացումները՝ առաջարկվող ներդրումից 3 տարի անց	
--	--

4. Ներդրումի մանրամասները

Նկարագրեք, թե ինչպես առաջարկվող ներդրումը կնպաստի ներքոնշյալին՝

- արագ վերականգնում COVID-19 համաճարակից և արտադրության ծավալների աճ
- մուտք դեպի այլ և ավելի եկամտաբեր շուկաներ
- կատարելագործված մրցունակություն

Առավելագույնը 3 էջ

Նկարագրեք ներդրումից հետո արտահանման համար առաջացած սառը շղթայի ցանկացած բաց կետ: Ի՞նչ մոտեցում է պետք ձեռնարկել այդ բացերը լրացնելու համար:

Առավելագույնը 1 էջ

Ո՞ր շուկաները կհանդիսանան թիրախային արտահանողների համար:

Գնահատեք վաճառքի ծավալները ըստ ապրանքի և մատակարարման շուկայի՝ ներդրումից հետո 3 տարվա համար:

Գնահատեք վաճառքի գինը 1 տոննայի համար՝ ըստ ապրանքի, յուրաքանչյուր թիրախ շուկայի համար:

Հայաստանում տիրող սննդի անվտանգության և սանիտարական դրույթները թույլ կտա՞ն մուտքը թիրախ շուկաներ: Եթե ոչ, ինչ միջոցներ պետք է ձեռնարկի հայտատուն՝ մուտքը թիրախ շուկաներ հեշտացնելու համար:

Գործադիր տնօրեն

(ստորագրություն)

Օր/Ամիս/Տարի